„ՍԳԿԿ„ ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

Հովհաննես Եղյանի կողմից, հնարավոր՝ վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում, կարգապահական վարույթ հարուցելու համար լսումներ հրավիրելու մասին

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հանձնաժողովը, մասնակցությամբ՝ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանի և Հարություն Գևորգյանի, քննարկելով ըստ Սամվել Մկրտչյանի /այսուհետ՝ դիմումատու/ Հովհաննես Եղյանի նկատմամբ ներկայացված դիմումը, որը հասցեագրված է „ՍԳԿԿ„ ԻԿԿ դիտորդ խորհուրդի նախագահ՝ Տիգրան Սարգսյանին, պարզեց, որ ներկայացված դիմումի առնչությամբ „Սնանկության մասին„ ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 1-ին մասի „3„-րդ ենթակետի և նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ մասերով սահմանված նորմերով, կառավարիչ՝ Հովհաննես Եղյանի նկատմամբ պետք է հարուցվի կարգապահական վարույթ: Հովհաննես Եղյանի կողմից, վարքագծի վերաբերյալ կանոնների հնարավոր խախտումը պարզելու նպատակով, ս.թ.հունվարի 20-ին նշանակվել է կարգապահական հանձնաժողովի նիստ, որին ներկայացել էին՝ հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանը և Հարություն Գևորգյանը: Հրավիրված նիստին չէին ներկայացել Արմինե Մովսիսյանը և Արմենակ Ադամյանը, որոնց բացակայությունը համարվեց հարգելի այն պատճառով, որ Արմինե Մովսիսյանի որդու առողջական վիճակի կարգավորման նպատակով, վերջինս գտնվում էր հիվանդանոցում, իսկ Արմենակ Ադամյանը կրել էր ծանր վիրահատություն և գտնվում էր հետվիրահատական, ռեաբիլիտացիոն շրջանում:

Հրավիրված նիստին ներկայացել էին նաև դիմումատու՝ Սամվել Մկրտչյանը և սնանկության գործով կառավարիչ՝ Հովհաննես Եղյանը /այսուհետ՝ կառավարիչ/: Հանձնաժողովի նիստը բացեց հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանը և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նիստին ներկա է գտնվել թվով երեք անդամներ, ուստի կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 4.2 կետի հիմքով, Ա.Սարգսյանը հայտնեց, որ նիստի անցկացման քվորումը ապահովված է և կարող են սկսել դիմումի քննարկումը: Նախ՝ Ա.Սարգսյանը զգուշացրեց նիստի մասնակիցներին , որ նիստը ձայնագրվում է:

Ա.Սարգսյանը առաջարկեց սահմանել դիմումի քննարկման համար տրվող հարցերի կամ հայտարարությունների հերթականությունը, որով առաջարկեց նախ լսել դիմումատուին, հարցերի դեպքում այն ուղղել դիմումատուին, այնուհետև ձայն տալ կառավարչին, հարցերի դեպքում այն ուղղել կառավարիչին և հանձնաժողովի անդամների կարծիքների միջոցով, կայացնել որոշում կարգապահական տույժ կիրառելու կամ այն կարճելու վերաբերյալ: Նշված առաջարկությունը ընդունվեց միաձայն:

Դիմումատու Ս.Մկրտչյանը իր դիմումում նշել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումը գրված է անհասկանալի հերթականությամբ /այն ճշտվեց նաև նիստի ընթացքում/, որ թիվ ԵԴ/0186/04/18 սնանկության գործի շրջանակներում, որում վերջինս հանդիսանում է որպես պարտապան, 08.11.2024թ-ին տեղի է ունեցել աճուրդ, սակայն հետագայում պարզվեց, որ աճուրդը տեղի է ունեցել 02.12.2024թ./, որով վաճառվել են վերջինիս պատկանող՝ ք.Երևան, Շիրակի 18-4 ավտոտնակը՝ 1.152.000 ՀՀ դրամ և ք.Երևան, Շիրակի 24-7 ավտոտնակը՝

2.082.000 ՀՀ դրամ արժողությամբ: Սակայն Ս.Մկրտչյանը, որպես վերը նշված գույքի սեփականատեր, ցանկացել է հետ գնել այդ գույքերը և խնդրանքով դիմել է Հ.Եղյանին, որպեսզի վերջինս կազմակերպի այդ գույքերի նրան վաճառելու հարցը: Ըստ ներկայացված դիմումի Հ.Եղյանը հայտնել է, որ 02.12.2024թ.-ին տեղի կունենա աճուրդ, նշված աճուրդով կնվազի գույքերի արժեքները և վերջինս կկարողանա ձեռք բերել այդ գույքերը: Դիմումատուն համաձայնելով կառավարչի հետ սպասել է մինչև 02.12.2024թ աճուրդի օրը և 05.12.2024թ-ին զանգահարել է նրան, իսկ այնուհետև այցելել է կառավարչի գրասենյակ, ինչի արդյունքում կառավարիչը պատասխանել է, որ գույքերը գնել է Արշակ Ներսեսյանը ու ավելացրել, որ ,,ոն՞ց կարող է տվյալ մարդը ավտոտնակները առանց տեսնելու գնի:

Դիմումատուն ըստ իր կողմից ներկայացված դիմումի գտել է, որ որպես սեփականատեր իրեն գցել են մոլորության մեջ և իր ծանոթին վաճառել իրեն պատկանող ավտոտնակները, որի արժեքը միասին կազմում է 3.403.591 ՀՀ դրամ: Դիմումատուն իր դիմումում նշել է, որ այդ ավտոտնակները նա դեռ մինչև սնանկությունը վաճառել է այլ անձանց և ըստ դիմումատուի, որպեսզի նա չունենար խնդիրներ այդ անձանց հետ, կառավարիչը պետք է այդ ավտոտնակները վաճառեր իրեն: Իսկ ներկայումս կառավարիչը հատյնում է գույքը այլ անձանց վաճառելու մասին, չի կարող օգնել, դիմումով պնդել է ճանաչել աճուրդը անվավեր, փոխել իր սնանկության գործով կառավարչին, քանի որ կառավարիչը մութ գործերով է զբաղված: Դիմումատուի կողմից իր դիմումը հիմնավորող ապացույցներ, փաստաթղթեր դիմումին կից չեն ներկայացվել:

Ավելացրեց միայն, որ կառավարչի հետ կայացած հանդիպման ժամանակ կառավարիչը պնդել է, որ այդ ավտոտնակները իբրև թե ձեռք է բերել հենց ինքը՝ դիմումատուն, սակայն այլ անձի միջոցով, սակայն նման բան չէր կարող տեղի ունենալ, քանի որ ունեցել են ընդհանուր պայմանավորվածություն: Հայտնեց, որ բոլոր աճուրդների օրերին /7 ամիս/ հետևել է և պատրաստ էր այդ գույքերը ձեռք բերել ոչ թե 3.403.591 ՀՀ դրամ արժեքով, այլ պատրաստ էր ձեռք բերել նույնիսկ 4.000.000 ՀՀ դրամ արժեքով, իսկ ներկայումս ավտոտնակի իրական ձեռք բերողը իրեն առաջարկում է վաճառել այդ ավտոտնակները 5.000.000 ՀՀ դրամ արժեքով: Իր բանավոր հայտարարությամբ հայտնեց նաև, որ ներկայումս նա ունի բազմաթիվ խնդիրներ կապված այդ ավտոտնակները մինչև սնանկության վարույթը ձեռք բերողների հետ, չնայած նրան, որ կառավարչի հետ փոխադարձ պայմանավորվածության են եկել, որ այդ ավտոտնակները հրապարակային սակարկությունների միջոցով կիջեցվի յուրաքանչյուրը մինչև մեկ միլիոն ՀՀ դրամ և նա ձեռք կբերի այդ ավտոտնակները: Ըստ դիմումատուի բանավոր հայտարարության, կառավարիչը իմանալով այն հանգամանքը, որ այդ ավտոտնակները իր կողմից արդեն իսկ վաճառվել են այլ անձանց, իր գործողություններով դիմումատուի համար ստեղծել է նոր խնդիրներ՝ վաճառելով այդ ավտոտնակները այլ անձի: Դիմումատուն հայտնեց նաև կարծիք, որ կառավարիչը միտումնավոր այդ ավտոտնակները իր ազգականի հետ համագործաքցելով է վաճառել և դրա վերաբերյալ նա դիմումեր է ներկայացրել, ինչպես հակակոռուպցիոն հանձնաժողովին, այնպես էլ ՀՀ դատախազությանը:

Ա.Սարգսյանը նիստի մասնակիցներին հայտնեց, որ կարգապահական հանձնաժողովը ըստ,, Սնանկության մասին,, ՀՀ օրենքի, Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի, և ըստ սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնագրքի կարող է անդրադառնալ միայն դիմումում նշված հանգամանքներին, այն էլ միայն այնպիսի հանգամանքներին, որի քննարկման իրավասությամբ օժտված է հանձնաժողովը, մասնավորապես՝ հանձնաժողովը չի կարող անդրադառնալ դիմումում նշված այնպիսի հանգամանքներին, որոնք պայմանավորված են կառավարչի միտումնավորվածությանը /կոնկրետ դիմումում/, այլ անձի հետ փոխկապակցվածության, քանի որ նման հարցերը դուրս են հանձնաժողովի քննարկման իրավասություններից և նման հարցերը, կոնկրետ դեպքում, ենթակա են քննման քննչական մարմինների կողմից:

Անդրադառնալով դիմումատուին տրվող հարցերին Ա.Սարգսյանը դիմումատուից հետաքրքրվեց, որ եթե վերջինս պնդում է թե այդ ավտոտնակները կառավարիչը վաճառել է այլ անձանց, արդյոք նման պայմաններում կնքվել է օրենքով սահմանված առուվաճառքի պայմանագիր, որը ստացել է համապատասխան գրանցում, որին դիմումատուն պատասխանեց, որ նման գործողություններ իր կողմից չեն կատարվել և օրենքի ուժով վաճառք տեղի չի ունեցել, վաճառքը տեղի է ունեցել ներքին կարգով:

Մեկ այլ հարցով Ա.Սարգսյանը հետաքրքրվեց՝ ըստ իր կողմից տրված հայտարարությունների, մասնավորապես՝ այն հանգամանքների, որ նա նախապես պայմանավորվածություններ է ձեռք բերել կառավարչի հետ գույքերը գնելու վերաբերյալ, սակայն հանդիսանալով որպես պարտապան, նա իրավունք չուներ ձեռք բերելու այդ գույքերը, արդյոք նման պայմաններում դիմումատուն ցանկացել է կեղծ գործարքի մեջ մտնել կառավարչի հետ, թե ոչ, որին ի պատասխան դիմումատուն հայտնեց, որ նա պետք է սպասեր գույքի աճուրդային արժեքի նվազեցմանը, որից հետո գներ այդ ավտոտնակները:

Հ.Գևորգյանի այն հարցին, թե ինչու նախկինում չի ձևակերպել այդ առուվաճառքը, դիմումատուն պատասխանեց, որ քաղաքապետարանի հետ եղել են խնդիրներ, այդ գույքի վկայականների ստացման հետ կապված:Հ.Գևորգյանի մեկ այլ հարցին, թե որքան է եղել սկզբնական մեկնարկային արժեքը, դիմումատուն պատասխանեց, որ այն կազմել է 6000000 ՀՀ դրամ:

Լ.Սարգսյանի այն հարցին թե, իր կողմից կառավարչին կատարած զանգը տեղի է ունեցել մինչև աճուրդը, թե աճուրդից հետո, դիմումատուն պատասխանեց, որ մինն հայտարարված աճուրդը:

Լ.Սարգսյանի մեկ այլ հարցին, թե արդյոք վերջինս հանդիսանում է այդ ավտոտնակների միակ սեփականատերը, պարտապան- դիմումատուն պատասխանեց, որ այդ ավտոտնակները համատեղ սեփականության իրավունքով պատկանում են նաև իր կնոջը, որը դատարանի վճռով նույնպես ճանաչվել է սնանկ: Իր կնոջ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Գարիկ Մկրտչյանը: Հ.Եղյանը, պայմանավորվելով վերջինիս հետ,

ցանկացել են անհասկանալի ձևով այդ գումարը տրամադրեն ,,Կոնվերսբանկ,, ՓԲԸ-ին և բաշխման ծրագրերով թե Հ.Եղյանի և թե Գ.Մկրտչյանի կողմից իրեն չեն տրամադրվել: Միաժամանակ հայտնելով նաև, որ այդ բաշխման ծրագրերի ստացման վերաբերյալ դիմել է ՀՀ սնանկության դատարան:

Այնուհետև Ա.Սարգսյանը հայտնեց, քանի որ հանձնաժողովին հետաքրքրում է կառավարչի կողմից կատարված կոնկրետ վարքագծի խախտումը, ուստի ելնելով դիմումում նշված հանգամանքներից, այն է՝ կառավարիչը ստեղծել է դիմումատուի համար խնդիրներ, հետաքրքրվեց, թե կառավարիչը դիմումատուի համար ի՞նչ խնդիրներ է ստեղծել: Դիմումատուն հայտնեց, որ խնդիրը կայանում է նրանում, որ գույքերը դիմումատուն մինչև սնանկությունը վաճառել է այլ անձի, այդ գույքերը նա պետք է գներ, սակայն կառավարիչը այդ գույքերը վաճառել է այլ անձի, որի վերաբերյալ նա դիմել է քննչական մարմիններին:

Ա.Սարգսյանը դիմումատուից հետաքրքրվեց, թե ըստ իրեն, կառավարիչը ինչ օրենսդրական խախտում է թույլ տվել, որին ի պատասխան դիմումատուն հայտնեց, որ այդ ավտոտնակները իր անձնական գույքն է և նա պետք է գներ այդ գույքերը:

Այնուհետև հարցերի իրավունքը տրվեց կառավարչին և վերջինս դիմումատուին հարցրեց, թե նշված գույքերը ում են պատկանել, որին ի պատասխան դիմումատուն հայտնեց, որ այդ գույքերը սեփականության իրավունքով պատկանել են իրեն, սակայն վաճառել են այլ անձի:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումատուին ուղղված հարցերը սպառվել էին, ուստի հանձնաժողովի նախագահը ձայնի իրունքը ընձեռեց կառավարիչ Հ.Եղյանին, որը հանձնաժողովին ներկայացրեց սույն կարգապահական վարույթի շրջանակներում իր նկատմամբ ներկայացված դիմումի պատասխանը գրավոր տեսքով, որում, մասնավորապես, նշվում է, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 20.04.2018թ. թիվ ԵԴ/0186/04/18 վճռով Սամվել Համլետի Մկրտչյանը ճանաչվել է սնանկ և նույն դատարանի 27.04.2018թ. որոշմամբ պարտապանի սնանկության գործով կառավարիչ է նշանակվել ինքը՝ Հովհաննես Եղյանը:

ՀՀ սնանկության դատարանի 07.02.2020թ. որոշմամբ հաստատվել է Սամվել Մկրտչյանի պարտատերերի պահանջների վերջնական ցուցակը :

Իր մասնագիտական լիազորությունների կատարման շրջանակներում, գույքագրվել են պարտապան Սամվել Համլետի Մկրտչյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Աջափնյակ, Շիրազի փողոց 24 շենք, թիվ 7 և ք. Երևան, Աջափնյակ, Շիրազի փողոց 18 շենք, թիվ 4 ավտոտնակները, որի վերաբերյալ պատշաճ ծանուցվել են կողմերը և գույքագրմանը ներկա է գտնվել պարտապան Սամվել Մկրտչյանը: Գույքագրման ընթացքում Սամվել Մկրտչյանի կողմից որևէ առարկություն չի եղել, դեռ ավելին՝ վերջինիս կողմից դեռևս 21.08.2023թ. դիմում է ուղարկվել դատարան և սնանկության գործով կառավարչին, որով հայտնել է, որ ինքը՝ Սամվել Համլետի Մկրտչյանը հանդիսանում է ք.

Երևան, Շիրազի փողոց 24 /7 հասցեում գտնվող ավտոտնակի սեփականատերը: Այն գնվել է իր կողմից 31.09.2013թ-ին: Ինքը ամուսնացած է և ամուսնությունը գրանցված է 24.10.2005թ-ին: Կինը՝ Շուշան Հայրապետյանը՝ ՀՀ քաղ. օրենսգրքի 201 հոդվածով համարվում է այդ ավտոտնակի 1/2 բաժնի սեփականատերը և նման պայմաններում նա այդ հասցեում գտնվող ավտոտնակի նկատմամբ ունի համահավասար իրավունքներ: Խնդրել է հաշվի առնել Շուշան Հայրապետյանի իրավունքները և միայն նրա համաձայնությամբ և թույլտվությամբ կատարել գործողություններ: Դիմումատուն նշել է, որ հակառակ դեպքում դա կարող է դիտվել սեփականատիրոջ իրավունքների կոպիտ խախտում և կբողոքարկվի նրանց կողմից: Իր առարկությամբ կառավարիչը հայտնել է, որ Շուշան Հայրապետյանը Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 02.05.2017թ. թիվ ԵԱՆԴ/0034/04/17 վճռով նույնպես ճանաչվել է սնանկ:

Վերոհիշյալ անշարժ գույքերը գնահատելու համար իր կողմից հրավիրվել է անկախ գնահատող, որի վերաբերյալ պատշաճ ծանուցվել են կողմերը, Սամվել Մկրտչյանի կինը և վերջինիս սնանկության գործով կառավարիչ՝ Գարիկ Մկրտչյանը:

Գույքերի գնահատումից հետո 04.12.2023թ-ին հրավիրվել է Սամվել Մկրտչյանի սնանկության գործով պարտատերերի ժողով, որի ընթացքում քննարկվել է Սամվել Մկրտչյանին սեփականության /համատեղ սեփականության/ իրավունքով պատկանող անշարժ գույքերի աճուրդի ծրագրի հաստատման հարցը :

Պարտատերերի ժողովին ներկա են գտնվել պարտատեր «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի լիազորված անձ՝ Սամվել Գրիգորյանը և պարտապան՝ դիմումատու Սամվել Մկրտչյանը:

Պարտատեր «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի լիազորված անձ Սամվել Գրիգորյանը՝ տվել է իր համաձայնությունը և քվեարկել կողմ, որ Սամվել Համլետի Մկրտչյանի սնանկության գործով կառավարչի կողմից միջնորդություն ներկայացվի ՀՀ սնանկության դատարան՝ հրապարակային սակարկությամբ, բաց դասական եղանակով 2 (երկու) առանձին լոտերով օտարելու Սամվել Համլետի Մկրտչյանին սեփականության /համատեղ սեփականության/ իրավունքով պատկանող ք. Երևան, Աջափնյակ, Շիրազի փողոց 24 շենք, թիվ 7 և ք. Երևան, Աջափնյակ, Շիրազի փողոց 18 շենք, թիվ 4 ավտոտնակները:

Ըստ կառավարչի ներկայացրած առարկության, ժողովի ընթացքում պարտապան՝ կոնկրետ դեպքում դիմումատու Սամվել Մկրտչյանի կողմից որևէ առարկություն կամ որևէ խոսակցություն չի եղել այն մասին, որ վերոհիշյալ հասցեի ավտոտնակներն իրեն չեն պատկանում: Այնուհետև իր կողմից միջնորդություն է ներկայացվել ՀՀ սնանկության դատարան ստանալու թույլտվություն, հրապարակային սակարկությամբ, բաց դասական եղանակով 2 (երկու) առանձին լոտերով օտարելու Սամվել Համլետի Մկրտչյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող ք. Երևան, Աջափնյակ, Շիրազի փողոց 24 շենք, թիվ 7 և ք. Երևան, Աջափնյակ, Շիրազի փողոց 18 շենք, թիվ 4 ավտոտնակները:

Աճուրդի թույլտվություն ստանալու միջնորդության դեմ 08.12.2023թ.-ին դիմումատուի կողմից դատարան է ներկայացվել դիմում և վերջինս հայտնել է, որ <<երկու ավտոտնակները, որոնք գնահատվել և ներկայացվել են աճուրդի իրեն չեն պատկանում>>: Դատարանը 28.12.2023թ.-ի որոշմամբ դիմումը մերժել է այն պատճառաբանությամբ, որ դիմումատուն չի ներկայացրել որևէ հիմնավոր ապացույց:

ՀՀ սնանկության դատարանի կողմից 03.01.2024թ.-ի որոշմամբ կառավարչին թույլատրվել է հրապարակային սակարկությունների միջոցով վաճառել ք.Երևան, Աջափնյակ, Շիրազի փողոց 24 շենք, թիվ 7 և ք. Երևան, Աջափնյակ, Շիրազի փողոց 18 շենք, թվով 4 ավտոտնակները:

Վերոհիշյալ որոշման համաձայն հայտարարվել են աճուրդներ (կրկնաճուրդներ), որոնք չեն կայացել, իսկ 02.12.2024թ.-ին նշանակված աճուրդի ընթացքում նշված գույքերը վաճառվել են:

Իր առարկությամբ կառավարիչը նշել է, որ այն չի համապատասխանում իրականությանը և ամբողջովին առարկայազուրկ է, քանի որ նախ Սամվել Մկրտչյանը չէր կարող ձեռք բերել նշված ավտոտնակները, և բացի այդ, Սամվել Մկրտչյանի դիմումում վկայակոչված բոլոր փաստերը ահնիմն են և ենթակա չեն քննարկման: Ավելին, աճուրդից հետո Սամվել Մկրտչյանը 20.12.2024թ-ին այցելել է ք.Երևան, Արշակունյաց 5, 408 սենյակ հասցեում գործող կառավարչի գրասենյակ և իմանալով, որ աճուրդը կայացել է և գույքերը վաճառվել են, կառավարչից պահանջել է գնորդի տվյալների տրամադրում, սակայն վերջինս հայտնել է, որ օրենքի դրույթի համաձայն կառավարիչը գնորդի վերաբերյալ որև է տվյալի տրամադրման իրավունք չունի: Կառավարիչը նշում է, որ Սամվել Մկրտչյանը, չստանալով գնորդի վերաբերյալ տվյալներ, սպառնալիքներ է հնչեցրել իր հասցեին և հեռացել: Որից հետո, ըստ տեղեկությունների, Սամվել Մկրտչյանը դատարանում ծանոթանում է սնանկության գործի փաթեթին և ստանում տեղեկություն աճուրդում հաղթած մասնակցի վերաբերյալ: Այնուհետև եղբայրը զանգահարում է կառավարչին պահանջում գնորդի հեռախոսահամարը, սակայն կառավարիչը չի տրամադրում որևէ տվյալ: Այնուհետև Սամվել Մկրտչյանի եղբայրը՝ Հայկը, 23.12.2024թ-ին այցելում է կառավարչի գրասենյակ և պահանջում կայացած աճուրդի չեղարկում և նոտարական կարգով իր անվամբ առքուվաճառքի գրանցում: Նշվածին ի պատասխան կառավարիչը հայտնել է, որ ինքը գործել և գործելու է օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում:

Կառավարչի կողմից մերժում ստանալուց հետո պարտապան՝ դիմումատուի եղբոր հետ ունենում է վեճ, որի արդյունքում վերջինս հայտնում է կասկած, որ իր տեղեկություններով գույքը գնել է սնանկության գործով կառավարիչի ազգականը, որը հերքվում է կառավարիչի կողմից :

Այնուհետև Սամվել Մկրտչյանից կառավարիչը ստանում է ձայնային հաղորդագրություններ, որում Սամվել Մկրտչյանը, մեջբերում եմ, հայտնում է.
<Սամվել Մկրտչյանի խոսքը՝ <տուն քանդելը լավ բան չի, դու, իմանալով որ ես դրանք վաճառել եմ, հաշվի չառնելով իմ խնդրանքը, գույքը դրեցիր աճուրդ, բերեցիր քո բարեկամին էդ սև գործարքը կատարեցիր, էտի անհետևանք չի մնալու, դու լավ իմացի>, <ես հիմա գնալու եմ ինչքան ատյան կա հակակոռուպցիոն, դատախազություն, քո վրա գրեմ բողոք, որ դու քո ազգականի հետ առել ես այդ ավտոտնակները՝ հետագայում վերավաճառելու համար>, <դու ինձի մի դրդի հանցագործության>, <դու իմ երեխեքի բերանից ես կտրում>, < ես Վարդան Ղուկասյանից բռնած սաղին գրելու եմ>, <մեկա ճարելու եմ էտի ովա, քո հետ ոնցա շփվում, ինչա անում, պուճուր քաղաքա, ռաստ ենք գալու, ստեղ էլ ռաստ չգանք գերեզմանոցում ռաստ ենք գալու>, <դու էլ երեխեք ունես, ես էլ, կտենանք ում մերնա տղա բերել>:

Ներկայացնելով իր առարկությունները՝ կառավարիչը պնդում է, որ Սամվել Մկրտչյանի կողմից ներկայացված դիմումը անհիմն է և առարկայազուրկ:

Իր բանավոր հայտարարությամբ կառավարիչը կրկին անգամ պնդում է իր առարկություններում նշված հիմքերը և հայտնում է, որ զրպարտություն է այն հանգամանքը, որ կառավարչի և դիմումատուի միջև տեղի է ունեցել փոխադարձ պայմանավորվածություն, գույքի էժան ձեռք բերելու վերաբերյալ և նա հայտնել է դիմումատուին, որ աճուրդին կարող է մասնակցել ցանկացած անձ և ձեռք բերել գույքը:

Անդրադառնալով տրվող հարցերին, կառավարչին հարց ուղղեց Ա.Սարգսյանը, թե արդյոք կա հարուցված քրեական գործ, որը վերաբերելի է դիմումատուի կողմից ներկայացված դիմումին, որին ի պատասխան կառավարիչը հայտնեց, որ իր կողմից դիմում է ներկայացվել ինչպես ՀՀ գլխավոր դատախազությանը, այնպես էլ ՀՀ ոստիկանությանը, որը վերաբերելի է զրպարտանքին, իրեն և որդուն սպառնալու հանգամանքին:

Ա.Սարգսյանը կառավարչից հարցրեց, թե պարտապանի կամ այլ անձի կողմից աճուրդը անվավեր ճանաչելու դիմում ներկայացվել է թե՞ չ, որին ի պատասխան կառավարիչը հայտնեց, որ որևիցե մի հայցադիմում չի ներկայացվել և գույքը պետական գրանցում է ստացել գնորդի անվամբ:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ այլ հայտարարություններ, դիմումներ և հարցեր չեն հնչեցվել, ուստի Ա.Սարգսյանը հանձնաժողովի անդամներից հետաքրքրվեց, թե արդյո՞ք կարող են լսումները համարվել ավարտված, թե՞ չ, և ստանալով դրական կարծիք, Հովհաննես Եղյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում կարգապահական վարույթ հարուցելու համար նշանակված նիստը համարվեց փակված:

Այնուհետև կարգապահական հանձնաժողովի անդամները հայտնեցին իրենց կարծիքները, մասնավորապես՝

-Հարություն Գևորգյանը հայտնեց կարծիք, որով նշեց, որ որևիցե մի անօրինական գործողություններ չեն կատարվել, բոլոր գործողությունները կատարվել են օրենքի սահմաններում:

-Լուսինե Սարգսյանը հայտնեց կարծիք, որ կառավարչի կողմից բոլոր գործողությունները կատարվել են օրենքի սահմաններում և որևիցե մի խախտում չի կատարվել:

-Ա.Սարգսյանը հայտնեց կարծիք, որ դիմումը ներկայացված է միայն ենթադրություններից ելնելով, քանի որ դիմումին կից որևեիցե մի հիմնավի ապացույց չի ներկայացված, այլ ընդհակառակը, ըստ կառավարչի կողմից ներկայացրած փաստաթղթերի, կառավարչի կողմից կայացվել է աճուրդ և գույքը վաճառվել է աճուրդի միջոցով: Պարտապանը որևիցե մի առնչություն գույքի գնման հետ կապված չունի, պարտապան՝ դիմումատուն գույքը ձեռք բերելու իրավունք չուներ, նախկինում գույքի վաճառքի հետ կապված հանգամանքները իրատեսական չեն, քանի որ գույքը արդեն իսկ գտնվել է սնանկության ծավալի մեջ և այդ իսկ պատճառով էլ կարծիք է հայտնել, որ կառավարչի կողմից որևիցե մի խախտում չի կատարվել:

Այնուհետև հանձնաժողովի անդամները միաձայն քվեարկեցին Հովհաննես Եղյանի նկատմամբ կարգապահական վարույթը կարճելու վերաբերյալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախ հարկ է նշել, որ կարգապահական հանձնաժողովը պետք է ուսումնասիրի միայն ու միմիայն դիմումում նշված հանգամանքները, պարզի այդ դիմումում ընկած հանգամանքների հիմնավորվածությունը, ինչպես փաստաթղթային, այնպես էլ օրենսդրական և առկա իրավական ակտերի շրջանակներում:

Հանձնաժողովը իր լսումների ընթացքում չի կարող անդրադառնալ այնպիսի հանգամանքների, որոնք կազմված են միայն լոք ենթադրությունների հիման վրա, գրավոր դիմումի, որում արտացոլված են միայն անհիմն հայտարարություններ /առանց հիմնավորումների ներկայացման/, ինչպես նաև այնպիսի հարցերի և հանգամանքների, որոնք ենթակա են քննման, կոնկրետ դեպքում՝ քննչական կամ այլ համապատասխան մարմինների կողմից:

Կոնկրետ սույն դիմումում նշված հանգամանքները, մասնավորապես, դիմումատուի և կառավարչի միջև փոխադարձ պայմանավորվածությունը պարտապան՝ դիմումատուի կողմից գույքի ձեռք բերելու վերաբերյալ, կառավարչի ծանոթի կամ բարեկամի միջոցով գույքի ձեռք բերմանը, սնանկության ծավալում ընդգրկված գույքը, մինչև սնանկության վարույթը վաճառելու հանգամանքները չեն կարող քննարկման առարկա դարձվել, քանի որ այդ հայտարարությունները արված են լոք հայտարարությունների տեսքով, առանց հիմնավորվածությունների, քանի որ նշված հանգամանքները կարող են քննության առարկա դառնալ միայն քննչական մարմինների կողմից:

Ներկայացված դիմումում նշված հարցերից հանձանժողովի կողմից քննարկման ենթակա են միայն այն հանգամանքները, որոնք սահմանված են ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.2 հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, այն է՝ կառավարչի նկատմամբ կարգապահական պատասխանատվության կիրառման հիմքերն են՝ կառավարիչների մասնագիտական վարքագծի կանոնները խախտելը: Սակայն հարկ է նշել, որ կառավարչի կողմից կարգապահական պատասխանատվության ենթարկելու կամ կարգապահական վարույթը կարճելու հիմք կարող է հանդիսանալ նաև, ,,ՍԳԿԿ,, ԻԿԿ-ի 20.05.2023թ.-ին ընդհանուր ժողովի կողմից թիվ 1 որոշմամբ հաստատված սնանկության գործով կառավարչի վարքագծի կանոնագիրքը, որի 1 գլխով սահմանվում են կառավարչի կողմից սնանկության վարույթի ընթացքում իրականացվող պարտականությունները:

Այսինքն՝ նման պայմաններում սույն դիմումը քննարկելիս անհրաժեշտ է պարզել միայն, թե արդյոք կառավարիչի կողմից իր գործունեությունն իրականացնելիս օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտում տեղի ունեցել է թե ոչ:

Ըստ դիմումատուի կողմից ներկայացված դիմումի և առարկության, հրավիրված նիստի ընթացքում ներկայացված բացատրությունների, հայտարարությունների, հարցերի և հարցերի

պատասխանների պարզվեց, որ կառավարչի կողմից ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի հիմքով իրականացվել է գույքագրում, որի արդյունքները զետեղվել են գույքագրման ակտում, որի նկատմամբ առարկություններ պարտապան՝ դիմումատուի կողմից չեն ներկայացվել: Նման պայմաններում նույն օրենքի 47-րդ հոդվածի հիմքով պարտապանի գույքերը մտել են սնանկության ծավալի մեջ և եթե նույնիսկ ենթադրենք, որ այդ գույքերը վաճառվել են մինչև սնանկության վարույթը, ապա գույքագրման վերաբերյալ պարտապան՝ դիմումատուն ուներ հնարավորություն, ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով բողոքարկելու գույքագրման ակտի դեմ:

Անդրադառնալով կառավարչի կողմից գույքը հրապարակային սակարկությունների միջոցով վաճառելուն՝ հարկ է նշել, որ այս դեպքում նույնպես կառավարչի կողմից խախտումներ չեն կատարվել, քանի որ վերջինս ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1.1 մասի հիմքով հրավիրել է պարտատերերի ժողով, ընդ որում՝ կառավարիչը հաշվի է առել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումը, որը վերաբերելի է երրորդ անձի շահերին և ժողովին հրավիրել է ինչպես պարտապան՝ դիմումատուի կնոջը, այնպես էլ կնոջ սնանկության գործով կառավարչին: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ ժողովին ներկա է գտնվել նաև պարտապան դիմումատուն և վերջինս ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով չի բողոքարկել ժողովի որոշման դեմ և նման պայմաններում հաստատվել է պարտապանի գույքի վաճառքի ծրագիրը:

Միայն այն դեպքում, երբ կառավարիչը ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով աճուրդի թույլտվություն ստանալու միջնորդության մասին ծանուցել է ինչպես պարտապանին /չնայած, որ նման պարտականություններ կառավարիչը չուներ, նշված հոդվածով սահմանված է միայն պարտատերը/, այնպես էլ պարտապանի կնոջը և կնոջ սնանկության գործով կառավարիչ՝ Գարիկ Մկրտչյանին, պարտապան՝ դիմումատուն դատարան է ներկայացրել դիմում, որով վերջինս հայտնել է, թե երկու ավտոտնակները, որոնք գնահատվել և ներկայացվել են աճուրդի իրեն չեն պատկանում, որը դատարանի 28.12.2023թ.-ի որոշմամբ մերժել է, նշված որոշումը չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ: Իսկ այնուհետև ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 76-րդ հոդվածով սահմանված նորմերով և հիմքերով, կառավարչի կողմից միջնորդություն է ներկայացվել դատարան թույլատրելու սնանկության գործով կառավարչին հրապարակային սակարկությունների միջոցով պարտապանի գույքը վաճառելու մասին, որը դատարանի 03.01.2024թ.-ի որոշմամբ բավարարվել է, իսկ որոշումը չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ: ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի, ինչպես նաև ,,Հրապարակային սակարկությունների մասին,, ՀՀ օրենքի հիմքով, կառավարչի կողմից նշանակվել են բազմաթիվ աճուրդներ, իսկ 02.12.2024թ.-ին նշանակված աճուրդին իր հայտն է ներկայացրել ՀՀ քաղաքացին, որը աճուրդում ճանաչվել է հաղթող, իսկ հետագայում այդ գույքը պետական գրանցում է ստացել այդ անձի անվամբ:

Ինչ վերաբերվում է պարտապան դիմումատուի այն պնդմանը, որ իրեն պատկանող գույքերը պետք է առաջնային կարգով գնվեին իր կողմից կամ վերջինս կարող էր հրապարակային սակարկությունների միջոցով գնել այդ գույքերը:

Հիմք ընդունելով սույն եզրակացության մեջ նշված հանգամանքները և „Մնանկության մասին„ ՀՀ օրենքի 27.4 հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի պահանջները, այն է՝ Կարգապահական վարույթ հարուցող մարմինը չի հարուցում կառավարչին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարույթը կարճում է, եթե՝ բացակայում են կարգապահական խախտման հիմքերը և հատկանիշները, ինչպես նաև այն փաստը, որ կառավարչի կողմից առկա չէ այնպիսի գործողություն, որը կարող է բերել վերջինիս նկատմամբ կարգապահական տույժի կիրառմանը, ինչով պայմանավորված կառավարիչ՝ Հովհաննես Եղյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Կից ներկայացվում է կարգապահական վարույթին առընչվող փաստաթղթերը՝ 11 թերթից, ինչպես նաև նիստի ձայնագրության կրիչը:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան

Ա.Մովսիսյան